010.0079.200409

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2009 թվականի ապրիլի 7-ին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Սույն օրենքը տարածվում է համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների նկատմամբ 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի հարկի պարտավորություն ունեցող հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց վրա:

ՀՈԴՎԱԾ 2. Մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հաշվարկված հողի հարկի գումարները (մինչեւ 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) առանց հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում մինչեւ 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված եւ չվճարված տույժերի եւ տուգանքների վճարումից:
(2-րդ հոդվածը փոփ. 10.06.10 ՀՕ-105-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 3. Գյուղատնտեսական նշանակության հողերի համար 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի հարկի նկատմամբ նախորդ երեք տարիներին հաշվարկված եւ վճարված տույժերի եւ տուգանքների գումարները հաշվանցվում են հարկատուների՝ հողի հարկի գծով ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքով տրամադրվող հարկային արտոնություններով նախատեսված գումարները ենթակա չեն փոխհատուցման "Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

20 ապրիլի 2009 թվականի
ՀՕ-79-Ն